Բանվորական զորձի համար մղվող պայքարում—«ՑԵՂԻՐ ՊԱՏՐԱՍՏ»

СА 32-1/б4
ЗКЮП Ц-83

# „ՅԵՐԵՔԻ“ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

Işçi işi mubarəzəsi ygrynda—„HAZЬR OL“

# „UÇLƏRIN“ MUKAVƏLƏSI

ЗКЮП
Ц-83

ԱԴՐԼԵՆԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄ,
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

ԲԱԿՈՒ—1931 թ.

Гостип. „Кр. Восток“
Азполиграфа ВСНХ.
Баку, Карантин. 84.
Главл. 4252. Зак. 9079.
Стат-формат А-5.
Тираж 500.

24 SEP 2006
1 DEC 2006
Библиотека Института Международного Рабочего Движения Академии Наук СССР

# ԲԵԼԱՌՈՒՍԻԱՅԻ, ԱԴՐԲԵՋԱՆԻ ՅԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԾՐՋԱՆԻ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑՄՐՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿՆՔՎԱԾ 5-ԱՄՅԱԿ 4 ՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Դեռ նոր մեր յերկիրը հաշվի առավ 5 ամյակի արդյունքները։

5 ամյակի 3-յերորդ վճռական տարին սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում ցույց տվեց հսկայական հաջողություններ։ Խորհրդ. Միությունը հասել է վիթխարի հաղթանակների։ Նավթային 5-ամյակը կատարված է $2^1/_2$ տարում, արդյունաբերության մի շարք առաջատար ճյուղերում դարձյալ մեծամեծ հաջողություններով 5-ամյակը կատարված է $2^1/_2$ տարում։

Այս բոլոր հաղթանակներին հասել ենք շնորհիվ կոմունիստական կուսակցության փորձառու, անշեղ ղեկավարության, վորի գլուխը կանգնած է Լենինի ամենալավագույն աշակերտ՝ Ստալինը։

Խորհրդային Միությունը թևակոխել է սոցիալիզմի շրջանը։

Արդյունաբերության մեջ լենինյան «ով ում»-ի հարցը վճռված է հոգուտ սոցիալիզմին և նուչնպիսի հաջողությամբ հոգուտ սոցիալիզմի վճռվում է նաև գյուղատնտեսության բնագավառում։ Սոցիալիստական Սեկտորը տիրապետող տեղ բռնում մեր եկոնոմիկայում։ Յերկիրը մտել է սոցիալիզմի շրջանը։ Այս բոլոր հաջողությունների շնորհիվ սոցիալիզմը հեռավոր հեռանկար չինելուց դարցել մեր այսորվա պրակտիկան (համլ. ՀՅԵՄ IX համագ.) Կուսակցության գլխավոր գծի ճիշտ կիրառման հիման վրա վճռական պայքար մղելով աջ ոպպորտյունիզմի, վորպես գլխավոր վտանգի, «ձախ» խոտորումների և նրանց հանդեպ հաշտվողական դիրք բռնելու դեմ—բանվոր դասակարգը սոցիալիստական ինդուստրիայի արագ տեմպով ապահովեց իր ղեկավար դերը միջակ-չքավոր գյուղացիության նկատմամբ և միջակի շրջադարձը դեպի սոցիալիզմը։

10765

10 APR 2013

Գյուղը բռնել է սոցիալիզմի ուղին։ Գյուղում կոլխոզնիկը Խորհրդային Միության զորեղ հենարանն է հանդիսանում։ Համատարական կոլլեկտիվացման հիման վրա՝ պրոլետարիատի ամենավճռական թշնամին՝ կուլակությունը վոչնչացվում է։

Զարդել ենք միջազգային բուրժուազիայի փորձերը և վնասարարներին ԽՍՀՄ-ի ներսում։ Կապիտալիզմը կանգնած է անխուսափելի կործանման նախորեյին։ Մեզ մոտ արդյունաբերության և գյուղատնտեսության վերելք է։ Մեզ մոտ վոչնչացրված է անգործությունը, իսկ նրանց մոտ, բոլոր յերկրներում միլիոնավոր անգործներ կան։ Մեզ մոտ որեոր աճում է բանվոր դասակարգի բարեկեցությունը։ Նրանց մոտ, ձեռնարկողները անխնա հարձակում են գործում բանվորների աղքատիկ աշխատավարձի վրա, լոկաուտներ, վոչ լրիվ բանվորական շաբաթ, բանվորական որվա յերկարացում։

Հասունանում են նոր դասակարգային բռնկումներ։ Բոլշևիկյան կուսակցությունն լենինյան ղեկավարությամբ պրոլետարիատ և մեր յերկրի աշխատավոր մասսաները 5-ամյակի դիրքերում համառ աշխատանքով ամրացնում են գալիք համաշխարհային պրոլետարական հեղափոխության ճակատը։ ԽՍՀՄ-ի պաշտպանության համար կապիտալիստական յերկրներում բարձրանում են պրոլետարների միլիոնները։ Կոմինտերնի փորձված բոլշևիկյան ղեկավարությամբ մեր արտասահմանյան յեղբարները պատրաստում են իրենց շարքերը վճռական մարտերի, պրոլետարական դիկտատուրայի, համաշխարհային Հոկտեմբերի համար.

1931 թ. Սոցիալիզմի նորանոր նվաճումների, խոշորագույն հաջողությունների տարի յե լինելու կապիտալիզմի դեմ վարած պայքարում։ Կոլլեկտիվացման ասպարեզում պլանի կատարումը սոցիալիստական տարրերի բացարձակ գերակշռություն կտա, անհատական սեկտորի նկատմամբ, կամրապնդի բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության աշխատավոր մասսաների հետ, կավարտվի ԽՍՀՄ Սոց. եկոնոմիկայի հիմքի կառուցումը։ Դա համաշխարհային—պատմական նշանակություն ունեցող հաղթանակ կլինի (ՎԿՊԵ-ի ԿՎՀ և ԿԿ Դեկտեմբերյան Պլենումի վորոշումից)։

Սոցիալիստական հարձակման բոլոր ճակատներում բանվոր դասակարգի յերրորդ սերունդը—մանկական կոմունիստական կազմակերպությունը ակտիվ մասնակցություն է ունեցել կատարելով կուսակցության և խորհրդային կառավարության մի շարք կարևորագույն պատվերներ։

Պիոներական կազմակերպության ամբողջ ճանապարհը—դա ավելի ու ավելի պատանիներ սոց. շինարարության մեջ ներգրա-

ՀՍՍՌ-ԱԴՄ ԳՐ
Ա. Հ. Ա. ԱՐՇԱԿՅԱՆ
ՍՊԱՍԱՐԿԻ ՄՈՍԿՎԱ

59949-66



վելու ճանապարհն է։ Յերկրի առաջ դրված են չտեսնված հսկայական խնդիրներ։ ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը արդեն մարտականորեն դուրս է յեկել 5-ամյակի բարձրունքները նվաճելու գրոհին։ Նրա յետևից գնում են բանվոր դասակարգի մանուկների միլիոնավոր ջոկատները։

«Մենք այնպես պետք է շարժվենք առաջ, վոր ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը մեզ վրա նայելով կարողանար ասել՝ „ահա նա, իմ առաջավոր ջոկատը, ահա նա, իմ հարվածային բրիգադը, ահա նա, իմ իշխանությունը։ Նրանք կատարում են իրենց գործը, մեր անելիքն է լավ պաշտպանել նրանց ընդդեմ կապիտալիզմի և բորբոքել համաշխարհային հեղափոխության գործը»։ (Ստալին)։

Գլխավորելով աշխատավորների յերեխաների համաշխարհային մասսաները պիոներական կազմակերպությունը կուսակցության և կոմսոմոլի ղեկավարությամբ պետք է իր ամբողջ եներգիան, իր սերը սպասարկի ամբողջ ճակատով հարձակվող սոցիալիստական շինարարության հաղթական գործին, կապիտալիզմի արմատները արմատախիլ անելու գործին, կոփելով նրանցից անյերեր և դասակարգայնորեն աննկուն բոլշևիկներ, վորոնց վիճակված է կառուցվող սոցիալիզմի վերջնական ավարտումը։

Կնքելով այս պայմանագիրը Բելառուսիայի, Աղրբեջանի, Արևմտյան շրջանի պիոներ կազմակերպությունները պարտավորվում են կուսակցության և կոմսոմոլի ղեկավարությամբ մարտականորեն պայքարելու 5-ամյակը 4 տարում կատարելու խնդիրները իրականացնելու համար։

## ՍՈՑ. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՐԱՀԱՎԱՔԻ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՎ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ, ԵՆԵՐԳԻԱՆ, ՀԱՋՈՂ ԿԵՐՊՈՎ ԿԱՏԱՐԵՆՔ 5-ԱՄՅԱԿԸ

### ԱՐԴՖԻՆՊԼԱՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Մեզ վրա վերցնելով ոգնելու կուսակցությանը, կոմսոմոլին, պրոֆմիությունններին արդֆինպլանը կհասցնենք մինչև ցեխերը, նավթահորերը, ստանոկները։ Ցեխերում կազմակերպենք

ոպերատիվ պլանային խմբակներ հանդիպակաց պլաններ կազմելու։ Ամեն որ տեղյակ կպահենք բանվորներին արդիինպլանի կատարման ընթացքի մասին։ Կազմակերպենք 5-ամյակի անկյուններ։ Յուրաքանչյուր ոլակ ցեխում լույս ե ընծայում տեղական թերթիկ։

Կկազմակերպենք պիոներների և բանվորների միտինգներ, յերբորդ վճռական տարում 518 և 1040 խոշորագույն ձեռնարկություններ և մեքենա-տրակտորային կայաններ կառուցելու, 5-ամյակի վերջում 46 միլ. տոննն նավթ արտադրելու մասին։

Շեֆություն կվերցնենք ֆաբրիկների, գավոդների, նավթահորերի վրա, կկցենք նրանց ոլակները, կհետևենք նրանց տեխնիկական դրությանը։

Ցեխերում, նավթահորերում կկազմակերպենք պիոներական դիրքեր, կստուգենք արտադրանքների վորակը։ Կկազմակերպենք բրակների և որինակելի արտադրանքների ցուցահանդես։ Կպայքարենք բոլոր այն ծռմռումների դեմ վորոնք պատճառ են հանդիսանում նավթը գաղային վիճակում նավթահորերի անցքերով դուրս թռչելու—փչանալու։

Կուսումնասիրենք բրակների պատճառները։ Մասսայական աշխատանք կծավալենք բանվորների մեջ արտադրանքների վորակի համար։

Կբարձրացնենք աշխատանքային կարգապահությունը։ Կպայքարենք պրոդուլչչիկների, ծուլերի, հարբեցողների և գողերի դեմ։

Ցեխերում, նավթահորերում, բնակ ընկերություններում լայն բացատրական աշխատանք կծավալենք։ Շեֆություն կվերցնենք նրանց կարմիր և սև տախտակների վրա։

## ԿԱԶՄԱԿԵՐՊԵՆՔ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱՆ

«Մեր հանդեպ կանգնած և մի բերթ, վոր կոչվում ի գիտություն իր բազմաթիվ ճյուղերով։ Այս բերթը մենք ինչ եվ վոր ուզում ե լինի պետք ե գրավենք, այդ բերդը պիտի գրավի յերիտասարդությանը, յեթե նա ուզում ե նոր կյանք կառուցողը լինել յեթե նա ուզում ե լինել հին գվարդիայի իսկական փոխանորդը» (Ստալին)։

Վորպեսզի կուսակցության և ընկ. Ստալինի լոզունգը իրագործենք մեզ վրա պարտականություն ենք վերցնում, ամեն մի ցեխում կազմակերպել տեխնիկական խմբակ, նրա մեջ քաշել



30-ից վոչ պակաս բանվորներ, տեխնիկական գիտելիքների բարձրացման և տեխնիկական անգրագիտության վերացման համար։ Արտադրական պիոներ կոլեկտիվը կազմակերպում ե բրիգադա արդյունաբերության և ռացիոնալիզացիային ոգնելու, մոբիլիզացիայի յենթարկելով պատանի գյուտարարների ստեղծագործությունը, հավաքելով բանվոր գյուտարարների առաջարկությունները՝ մեքենաների լիակատար սարքավորման համար։

Յուրաքանչյուր պիոներ ներգրավում ե իր բանվոր ծնողին բրիգադայի մեջ մասնակից անելով արտադրական խորհրդակցություններին աշխատանքներին։

Յուրաքանչյուր բաղային կից կկազմակերպենք ռադիո, ֆոտո, ելեկտրո, յերկրաբանական խմբակներ և „տեխնիկան մասսաներին“ բջիջներ։ Կտարածենք բանվորների մեջ տեխնիկական գրականություն։ Կներգրավենք վորակյալ բանվորներին, ինժեներա-տեխնիկական ուժերին, մանուկների համար, տեխնիկական գրականություն հրատարակելու։

Խոշոր ռայոններում կստեղծենք մանկական-տեխնիկական-գյուղատնտեսական կայաններ՝ Բելառուսիայում 50, Ադրբեջանում 25, և Արևմտյան շրջանում 61.

# ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԹՈԴ

## ՍՈՑՄՐՑՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Դեռ ևս հարվածայնության շարժումից դուրս մնացած բանվորներին գրավենք հարվածային բրիգադները։

Մենք կոչենք մեր հարվածային հայրերին անցնելու սոցիալիստական աշխատանքի բարձրագույն ձևերին (Միջանցուկ բրիգադ, հնգամյակի ջոկատ, ինքնարժեք իջեցման, որինակելի արտադրանքների բրիգադ և բրիգադներ—կոմմունաներ)։

Շեֆություն կվերցնենք միջանցուկ բրիգադների վրա։

Յուրաքանչյուր ոլակ մինչև 5-ամյակի վերջը, արտադրության համար կոնտրակտացիայի յե յենթարկում 5 բանվոր։

Կանցկացնենք հարվածայինների աշխատանքների ստուգատես. Նրանցից լավագույների աշխատանքը բանվոր մասսաների սեփականություն դարձնելով։ Պատի լրագրում վեր կհանենք լավագույն հարվածայինների աշխատանքները։

Սրա հետ միարժամանակ կպայքարենք և դիմակազերծ կանենք կեղծ հարվածայիններին, վորոնք սևացնում են հարվածայինների պատվավոր անունը։

Կկնքենք և կատուգենք սոցմրցման պայմանագրերի իրականացումը, կոլխոզները՝ ձեռնարկությունների, ողակները պիոնեական բրիգադների և ծնողների հետ։

Յուրաքանչյուր ձեռնարկության կից կկազմակերպենք պիոներական անկյուններ, կծանոթացնենք բանվորներին մեր աշխատանքների հետ։

Արտադրության ամեն մի անկյունում կցուցահանենք 5-ամյակի կատարումը։

## ԻՐԱԳՈՐԾԵՆՔ ԵԼԵԿՏՐՈՖԻԿԱՑԻԱՅԻ ԼԵՆԻՆՅԱՆ ՊԼԱՆԸ

Ոգնենք ելեքտրոֆիկացիայի շեֆին—կոմսոմոլին պայքարելու իր արդյունաբերության էներգիա—տնտեսության լավ կազմակերպման համար, ելեքտրականության նորա-նոր կիրառությունների (ելեքտրոսվարկա և այլն) ելեքտրոդավոդները ժամանակին ռայոնական ելեքտրոկայանների պատվերները՝ ելեքտրո սարքավորումներ կատարելու համար։ Ուսումնասիրենք ելեքտրո-տեխնիկայի հիմքերը, ուսումնասիրենք մեր արդյունաբերության ելեքտրոսարքավորումը, մեզ վրա վերցնենք ձեռնարկություններում, դպրոցներում, բնակ ընկերություններում հետևելու ելեքտրոեներգիայի ճիշտ ծախսումների վրա։

Դպրոցների ծրագրների մեջ մտցնենք մեր ռայոնի ձեռնարկության ելեքտրոֆիկացիայի հնգամյա պլանի ուսումնասիրությունը։

Ոգնենք նոր ելեքտրո շինարարության, կոլխոզների մեջ լայն բացատրական աշխատանք տանենք ելեքտրոեներգիան գյուղատնտեսության մեջ գործադրելու համար։

## ՆԱՎԹԻ, ՏՈՐՖԻ, ՎԱՌԵԼԻՔԻ ՀԱՄԱՐ

Հնգամյակի 3-րդ վճռական տարում 15 միլ. 337 հազար տոննա նավթ արտադրելու համար վարած պայքարում ոգնենք կուս. և կոմսոմոլին կատարելու 2-րդ նավթային հնգամյակը, պայքարելու 1932 թ. 21 միլ. տոն նավթի համար։

Շեֆություն վերցնենք տորֆա մշակումների վրա։ Կազմակերպված սպասարկությունը ցույց տանք տորֆամշակումներում բանվորներին, ոգնենք Բելոռուսկային տորֆբուսի փոխվելու։ Պիոներներ, արդյունաբերության, գյուղատնտեսության մեքենատրաքտորային կայաններում յեղեք անողոք մարտիկներ՝ վառելիքը խնայողաբար ծախսելու համար։



## ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՅԻ ՅԵՆԹԱՐԿԵՆՔ ՆԵՐԲԻՆ ՄԻԶՈՑՆԵՐԸ ՄԵՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Պարտականություն ենք վերցնում մեզ վրա արդյունաբերության համար մետաղների մնացորդներ հավաքելու։ Յուրաքանչյուր պիոներ պարտավոր է վոչ պակաս 20 կգ. յերկաթի ավելցուկներ հավաքելու.

Աղբեջանում 25 կիլոգրամ վոչ պակաս։ Ֆաբրիկաներում, գավոդներում կազմակերպենք աղդանշանային դիրքեր։ Կ'պայքարենք հանքի և գանազան մնացորդների ռացիոնալ ոգտագործմանը։

Բոլոր միջոցները մոբիլիզացիայի յենթարկենք սոց-շինարարության ամրացման համար։ Յուրաքանչյուր պիոներ «հնգամյակը 4 տարում» փոխառության բաժանորդագրվել վոչ պակաս 50 կոպեկ։ Ոգնենք խնայդրամարկղների աշխատանքներին յուրաքանչյուր ողակ պարտավոր է 10 ավանդատու գրավելու և ինքը՝ ամբողջ ողակը կոլեկտիվ կերպով հանդիսանում է խնայ-դրամարկղին ավանդատուն։

## ԼԻԿՎԻԴԱՑԻԱՅԻ ՅԵՆԹԱՐԿԵՆՔ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՃԵՂՔՎԱԾՔԸ

«Յ»-ի պիոներ կազմակերպությունները զորահավաքի յենթարկվում պիոներական ուժերով ոգնելու ՎԿՊԵ-ի (բ) ԿԿ դիմումը տրանսպորտի ճեղքվածքների մասին իրացնելու, բարձրացնելու ցամաքային և ջրային տրանսպորտը, ուժեղացնելու կուլտ դաստիարակչական աշխատանքները։ Յերկաթուղային և ջրային տրանսպորտում ծավալելու սոցմրցությունը։ Պիոներական կոլեկտիվը պարտականություն է վերցնում իրա վրա ստուգելու սոց-պայմանագրի կատարումը։ Յուրաքանչյուր ողակ սոց պայմանագիր է կնքում բրիգադների հետ վառելիքը խնայողաբար գործադրելու, մեքենաների վրա լավ հսկողություն դնելու, պրոդուլները վոչնչացնելու և հարբեցողության դեմ պայքարելու գծով։ Յուրաքանչյուր կոլեկտիվ վառելիքի վրա հսկիչ է հանդիսանում։ Ուշադիր կհետևենք ածխի ճիշտ գործադրումների, վառելիքի և յուղերու նյութերի խնայողությանը և այլն։ Վեր կհանենք վագոնների և ցիստերների դատարկ լինելու պատճառները, կոգնենք գնացքների շարժումների լավացմանը, յերկաթուղային կոլլեկտիվներից կազմակերպենք սոցիալիստական կոնվոյներներ։

## ՊԱՅՔԱՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ—ՊԱՅՔԱՐ Ե ԱՐԴՓԻՆՊԼԱՆԻ ՀԱՄԱՐ

Փակ բաշխիչների, զավոդներին կից ճաշարանների վրա շեփություն վերցնելով հերթապահություն կահմանենք, կոգնենք ճաշի ընթացքում արագ և կուլտուրական կերպով սպասարկելու ճաշողներին։

Կոգնենք մերձ քաղաքային տնտեսությունները ծավալելու. շեփություն կվերցնենք զավոդներին, ֆաբրիկներին կից պարատացման կետերի, խողարուծարանների վրա։ Պարարտ խողարուծության համար—պայքար ե մսի պրոբլեմը լուծելու համար։ Զորահավաքի յենթարկենք պիոներներին և աշխատավոր պատանիներին ուժերը գործնականորեն իրականացնելու կուսակցության խնդիրները կոոպերացիայի վերակառուցման ընագավառում։

## ՊԱՅՔԱՐ ԿՈԼԽՈԶ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Փաստերով համոզենք անհատ տնտեսատեր մեր ծնողներին կոլտնտեսության առավելություններում։ Վճռական պայքար տանենք դասակարգային թշնամու (կուլակ, յենթակուլակ, տերտեր) յելույթների դեմ, ջախջախելով նրանց ագիտացիան կոլխոզների նվաճումների կոնկրետ փաստերով։ Յուրաքանչյուր կոլլեկտիվ իր ծնողներից բացի 15-ից վոչ պակաս անհատական տնտեսություններ պիտի ներգրավի կոլխոզի մեջ։ Կոլխոզներում, սովխոզներում կազմակերպել 2-ից վոչ պակաս բրիգադներ, պայմանագիր կնքել կոլլեկտիվը՝ կոլխոզի, ողակը՝ բրիգադի, պիոները ծնողի և կոլխոզնիկների հետ։ Աշխատենք կոլխոզների բոլոր աշխատանքները գործավարձային սիստեմով անցկացնելու։ Սրանով բարձրացնենք կոլխոզի աշխատանքի արտադրողականությունը։ Յուրաքանչյուր ռայոնում կազմակերպենք 7-ից վոչ պակաս կառնավալներ ագիտ սելերով և կոլխոզի նվաճումների ցուցահանդեսով շախկապելով նրանց գյուղատնտեսական կամպանիաների հետ։

Քաղաքային կոլլեկտիվը պարտավոր ե շեփական կոլլեկտիվին ողնելու համար գյուղ ուղարկել 6 բրիգադ։ Նրանց հիմնական մասը ուղարկել գարնանացանի և բերքահավաքի ընթացքում։

## ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ողնենք մեր յերկրում մսի խոշոր սոցիալիստական ֆաբրիկներ ստեղծելու։ Շեփություն վերցնենք խողարուծարանների, կոլխոզ-



գյուղերի վրա։ Յուրաքանչյուր պիոներ կոլլեկտիվ պետք ե մեծացնի 5-ից վոչ պակաս խոզուկներ և 5 հորթուկ, քաղաքային կոլլեկտիվը 5 խոզուկներ և յուրաքանչյուր ողակ մի վոչխար, հիմք դնենք կերի և սիլոսի կուլտուրաների փորձադաշտերի, միևնույն ժամանակ կովենք մարդերի, արոտատեղերի վորակի բարձրացման համար։ Հասակավորների ողնությամբ լինենք ամենալավ ողնականները սիլոսացման մասնակցելու գործում։ Փորենք սիլոսի հորեր կամ տրանշեյներ։

Ռայոնում կազմակերպել 5-ից վոչ պակաս հավանոցներ վորոնց մեջ մեծացնել 500 ճտեր։ Կազմակերպել 5 ճաղարանոցներ։ Ամեն մի կոլլեկտիվ պիտի հաշվի առնի իր գյուղխորհուրդի հավերի ձու ածելու գործը և կազմակերպել 8 վերահսկիչ բջիջ։ Յուրաքանչյուր պիոներ մթերում ե 10 ձու և հանձնում ե մթերող կետերին։

Աղրբեջանի պիոներներին աշխատանք տանել քոչվորներին հայթավայրերում մնալու՝ բամբակի դաշտերը բանուժով ապահովելու։

Քոչվորների մեջ կուլտ-մասսայական աշխատանք ծավալել արմատացնելով ռադիո, անգրագիտության վերացման կազմակերպումը, կարմիր վրաններ, յերեկոներ. քոչի ընթացքում ոգտագործել թուրք քոչվորների անցնելը հայկական գյուղերով՝ ինտերնացիոնալ աշխատանքի համար։

## ՊԱՅՔԱՐ ԿԱՆԱՉԵՂԵՆԻ ՅԵՎ ՄՐԳԵՂԵՆԻ ՀԱՄԱՐ

Կոլխոզներին, սովխոզներին կից կկազմակերպենք մեկական փորձնական բանջարանոցներ, Հիմք դնել վոչ պակաս 300-ից ջերմոցային շրջանակի և 8 հեկտար .այդի ամեն մի ռայկազմակերպության վրա։

Քաղաքային բաղան կամ կոլլեկտիվը պարտավորվում ե կազմակերպել բնակընկերություններին, բանվորական շեներին կից մեկ բանվորական կոլլեկտիվ բանջարանոց։

Զորահավաքի յենթարկել պիոներներին մթերումներին և կոնտրակտացիային ողնելու։ Ռայոնական կազմակերպությունները ամեն տարի մթերում են վոչ պակաս 180 փութ խնձոր և 10 տոնն կարտոֆիլ։

Ողնենք տեղական կազմակերպություններին գարնան ցանքերի և տեխնիկական կուլտուրաների կոնտրակտացիայի գործում։

Յուրաքանչյուր կոլլեկտիվ պարտավոր և կազմակերպելու մի բրիգադ կոնտրակտացիային ողնելու։

# ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

## (ԱՆՏԱՌԸ ՍՈՑ. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ)

Յուրաքանչյուր պիոներ կոլեկտիվ տնկում է 100 վոչ պակաս ծառ։ Կազմակերպում է բրիգադա մատղաշ ծառերը կտրելուց, հրդեհից պաշտպանելու համար։ Ոգնենք անտառամթերմանը բան. ուժով ապահովելու և ամրացնենք անտառահատների աշխատանքային դիսցիպլինան։ Ամեն մի հեկտար անտառամթերման գործում կազմակերպենք մեկ կուլտ սպասարկություն։

Պիոներների ուժերով կազմակերպենք մեկ հատ կարմիր սայլաշարք փայտ տեղափոխելու համար։ Անտառամթերումներում հատուկ ոդակներ առանձնացնենք անտառահատներին նորմալ մթերքներ մատակարարելու, կազմակերպենք հաշի մատուցում և այլն։

## ՆՈՐ ՏԵԽՆԻԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Բամբակ, կենաֆ, կտավհատ)

Կպայքարենք ԽՍՀՄ-ի բամբակային անկախության համար։ Կատարենք բամբակի 5-ամյա պլանը։ Յուրաքանչյուր պիոներ կոլեկտիվ կոլխոզային դաշտերում 1 հեկտարից վոչ պակաս բամբակ է ցանում և հավաքում է 10 փթից վոչ պակաս։ Կոլխոզներում, սովխոզներում շերամապահության համար թթենիներ դընենք։

Կմասնակցենք շերամի սերմերի պլանի իրացմանը, բոժոժների կոմպանիային կտեղավորենք Աղրբեջանում 123000 տուփ շերամի սերմ, լայնացնելով շերամապահության կերի բազան, բոժոժների կոնտրակտացիա և վորդակերակրման տարի մտցնելով։

Կտավհատի ռայոններում տեխնիկական կուլտուրաների 350 փորձադաշտ պատրաստել։ Լայն բացատրական կամպանիա կտանենք անհատականների մեջ տեխնիկական կուլտուրաների բարձրացման համար ի հաշիվ մյուս ցանքսերի։

Գյուղկոլեկտիվը պետք է կազմակերպի 3 շաբաթվորյակ կտավհատի փռելու և 10 աշխատանքային որ նրա վերամշակման համար։ Կտավհատի համար նոր կառուցվող զավոդների վրա շեփություն կվերցնենք։

Պիոներական յեռանդով կպայքարենք կտավհատ, բոժոժների կոնտրակտացիայի պլանի կատարման համար։



## ԼԱՅՆԱՑՆԵՆՔ ՑԱՆՔՍԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ԴԱՇՏԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Կատարել կոլխոզի, սովխոզի պատվերները՝ կոլեկտիվի հավաքույթներում, դպրոցական պարապմունքներին մշակել ցանքսերի արտադրական պլանը։

Հանդիպակած պլանի մարտիկ լինել։

Զտել 2-ից վոչ պակաս տոնն ցորեն և 1 տոն եղ ախտահանել։

Կազմակերպենք բոլոր տեսակի պարատանյութերի՝ մոխիր, հավերի ախպ, և տորֆի թերթիկներ, յուրաքանչյուր կոլեկտիվ 1 տոնն հավաքելով։ Յուրաքանչյուր ռայոնում կազմակերպենք 2-ից վոչ պակաս բրիգադ, ազատ հողամասեր գտնելու և լիակատար ոգտագործելու։ Կապ հաստատելով բույսերի պաշտպանության կայանների հետ լայն մասսայական աշխատանք ծավալենք գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարելու գործում։

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Լինենք տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների շեֆը։ Մեքենա-տրակտորային կայաններում արդֆինպլանը կատարելու գործում ծավալենք մասսայական քաղլուսավարական աշխատանքներ։

Յուրաքանչյուր հանրապետության մեջ, յուրաքանչյուր շրջանում մեքենատրակտորային կայաններ կառուցելու համար՝ բացել միջոցների գանձում՝ ամեն մի կոլեկտիվը 20 ռ. վոչ պակաս։ Կուլտ մասսայական աշխատանք տանենք մեքենատրակտորային կայանների բանվորների մեջ, մաքսիմում ծավալենք սոցմրցումը և հարվածայնությունը տրաքտորիստների մեջ։

Յուրաքանչյուր կոլեկտիվ նախաձեռնող է հանդիսանում տրաքտորային բաժնետոմսերի տարածման գործում կազմակերպելով յերեկոներ, ագիտացիա մղելով և վերջապես հատուկ բրիգադներ ոդակներ կազմելով։

## ԱԳՐՈ-ՏԵԽՆԻԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Յուրաքանչյուր ռայոնում կազմակերպել 5-ից վոչ պակաս ագրոկետեր, ուր ներգրավել կոլխոզնիկներին, անհատականներին, չքավոր-միջակային աղգարնակությունը։ Ամեն մի ռայոնում գյուղատնտեսության փորձառուների 20-ից վոչ պակաս

բրիգադա կազմակերպել։ Ամեն մի կոլեկտիվ պետք է ագրոգրա-
կանության տարածի յուրաքանչյուր պիոներ 1 ռ. հաշվելով։

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Կոլխոզցենտրի հետ միասին անցկացնել կոլխոզնիկների յե-
րեխաների ռայոնական, հանրապետական, շրջանային հավաքներ
քննության առնելով նրանց գյուղատնտեսական աշխատանքի
խնդիրները։

1931 թ. կոլխոզներում հասնել յերեխաների աշխատանքի
լիակատար կազմակերպմանը։ Տնտեսության մեջ զբաղված յերե-
խաների հետ սիստեմատիկ աշխատանք տանել։

Բատրակներին սոցիալիստական սեկտորի մեջ ընդգրկելով
միևնույն ժամանակ ստուգել նրանց պայմանագրերը կնքված
վարձողների հետ։

## ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Կուլտուրական շինարարության հիմնական խնդիրներն են.
ԽՍՀՄ դարձնել համատարած գրագիտության յերկիր։ Սոցիալիս-
տական շինարարության համար պատրաստել պրոլետարական
կադրեր, դաստիարակել նոր մարդուն նոր կենցաղի համար, ար-
մատացնել նրան բանվորների, բատրակների չքավորների, կոլ-
խոզնիկների, միջակների և բոլոր յերեխաների մեջ։

## ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԵՆՑԱՂԻ ՀԱՄԱՐ

Յուրաքանչյուր կոլեկտիվ իր ուժերով գրագիտություն սո-
վորեցնի 20 անգրագետների և կիսագրագետների, վորի համար
առանձնացնել 10-ից վոչ պակաս կուլտ բանակայիններ. շեֆու-
թյուն վերցնելով անգրագիտությունը վերացնող կետերի վրա,
անցկացնել անգրագիտության վերացնող կետերի ստուգման տա-
նոնորյակ գյուղխորհուրդներին կից կազմակերպել կուլտ կապի
դիրք։

Բոլոր քաքաքային դպրոցները ռադիոֆիկացիայի յենթար-
կել։ Յուրաքանչյուր կոլեկտիվ պարտավոր է ռադիո ընդունիչ
պատրաստելու և դնելու յենթաշեֆ գյուղի դպրոցում, շեֆու-
թյուն վերցնելով կարմիր անկյունների, խրճիթ-ընթերցարան-
ների, ակումբների և ռադիո դրուժների վրա։



Յուրաքանչյուր խոշոր կետերում վազմակերպել մեկ ման-
կական կինո-թատրոն, և մեկ շրջիկ կինո գյուղին սպասարկելու
համար։

## ՊՈԼԻՏԵԽՆԻԿ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ստուգենք և վերջացնենք դպրոցների կցումը ֆաբրիկնե-
րին, զավոդներին, սովխոզներին և ուսումնական տարվա սկզբ-
բին ամբողջ կրթական աշխատանքները կապենք ձեռնարկության
աշխատանքի հետ։

Դպրոցին քաշենք արդիֆինպլանների համար մղվող պայ-
քար, ակտիվ մասնակցելով ձեռնարկությունների հասարակական-
քաղաքական աշխատանքներին։

Յուրաքանչյուր դպրոցում, բաղայում կազմակերպել բան-
վորական սենյակ, լայն կերպով գրավելով մասնագետներին, վար-
պետներին հարվածայիններին ղեկավարության և ոգնության
համար։

Կազմակերպենք շաբաթորյակ պոլիտեխնիզացիայի և ընդ-
հանուր պարտադիր ուսուցման համար։ Մինչև ուսումնական
տարվա սկսվելը կազմակերպենք նախաձեռնող խմբակներ պիո-
ներներից, պիոներ աշխատակիցներից, բանվորներից, կոլխոզ-
նիկ հարվածայիններից և ինժեներա-տեխնիկական պերսոնալից,
նոր լույս տեսած դասագրքերը, ուսումնական ծրագրերը կազ-
մելու և քննության առնելու համար։

Ուսումնական տարվա սկզբին ստուգատես անցկացնել պիո-
ներ կազմակերպությունների և տնտեսական կազմակերպու-
թյունների միջև կնքված պայմանագրերի իրագործման շուրջը։

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Կազմակերպենք մանուկների 100%-ով ընդհանուր նախնա-
կան կրթության մեջ ընդգրկելու։ Բոլոր հասարակական պրոֆ-
միութենական կոոպերատիվ կազմակերպությունների ստուգա-
տես անցկացնենք, դպրոցականներին տաք նախաճաշով, հագու-
ստով, կոշկեղենով, գրենական պիտույքներով ապահովելու խընդ-
իրը քննելու համար։

Ուժեղ պայքար ծավալենք դպրոցը թողնելու դեմ. լիկվի-
դացիայի յենթարկենք 2-րդ տարեցիությունը։ Կազմակերպենք
մանուկներին դպրոցներ տանելը։ Չքավոր աշակերտներին ոգ-
նելու նպատակով ստեղծենք հատուկ ֆոնդեր։

Կազմակերպենք փոխոգնության խմբակներ։

Շեֆական գյուղի դպրոցի համար յուրաքանչյուր քաղաքա-
յին բաղայից հավաքել 100-ից վոչ պակաս տետր, 1000 մատիտ
և 1000 ծայր։

Ակտիվ աշխատանք ծավալենք տեղական միջոցների մոբիլիզացիայի յենթարկելու՝ նոր-նոր դպրոցների կառուցման համար։

## ԿԱԴՐԵՐ

Ցարգործուս, գյուղերիս և գյուղտնտես դպրոցների համար պատրաստենք 500 պիոներ։ Մանկավարժական տեխնիկումների և մանկավարժական կուրսերին տանք 5000 մարդ։

## ՄԱՄՈՒԼ

Հասակավորների յուրաքանչյուր գրադարանին կից կազմակերպենք մանկական բաժին, իսկ խոշոր շրջաններում մանկական գրադարաններ։ Տրանսպորտի, վուշի, կենաֆի, անասնապահության և մթերումների գծով, մեքենա-տրակտորային կայանների ռայոններում անցկացնենք մանկական թղթակիցների բեյդեր։

Յուրաքանչյուր կոլեկտիվ շեֆություն ե վերցնում ֆաբրիկայի, կոլխոզի պատի լրագրի վրա։ Յույց և տալիս անհրաժեշտ ոժանդակություն նոր պատի լրագրեր կազմակերպելու գործում. լայն, մասսայական աշխատանք և ծավալենք ՎԵԿԱՊԵ-ի ԿԿ վորոշումը ստորին մամուլի և բանթղթակցական շարժումը ամրացնելու, աշխատենք բատրակների, բանվորների, կոլխոզնիկների և միջակ-հարվածայինների մի նոր հոսանք ընդգրկել բանթղթակիցների բրիգադների մեջ։

Արևմտյան շրջանում «Յունիյ Պիոներ» լրագրի տիրաժը բարձրացնել մինչև 100,000 որինակի. „Պիոներսկի Պրավդա»-ն 30,000 որինակ, „Վաժատիյ“, «Վաժակ», «Պիոներ» ամսագրերը յուրաքանչյուր կոլեկտիվին մի որինակ և «Դրուժնիյե Ռիբատյա» լրագիր մինչև 30,000 որինակ։

Բելոռուսիայում «Պիոներ Բելոռուսիյ» լրագիրը հասցնել մինչև 100.000 որինակ, «Յունդեր լենինեց»-ը 20,000, «Իսկրի Իլյիչա»-ն—10,000։

Աղրբեջանում «Պիոներսկայա Պրավդա»-ն 60,000 որինակի, «Պիոներ» (թրքերեն լեզվով)—40,000 որինակ, և մի որինակ, յուրաքանչյուր կոլեկտիվի նոր լույս տեսած ամսագրերից։

## ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ

ԽՍՀՄ-ի վրա ռազմական հարձակում դրծելու վտանգը ավելի սուր և դնում մանուկների ռազմա-քաղաքական դաստիարակության խնդիրը։ Այս խնդիրը անհրաժեշտ ե իրագործել չընդորինակելով հասակավորների մեթոդները, այլ մանուկների կոմունիստական դաստիարակության ամբողջ սիստեմը հագեցնել ռազմա-ֆիզկուլտուրային տարրերով։



Մինչև ոդոստոսի 1-ը ստուգենք բաղաների ռազմական աշխատանքները։ Ամառվա ընթացքում անցկացնել 2-ից վոչ պակաս ռազմա-ֆիզկուլտուրային խաղեր հրացգդային մրցությամբ (խաղերը տարվում են կոլեկտիվ-բաղաների և դպրոցների միջև։

Պիոներ բաղային կից կազմակերպենք զենքերի մի վորևե տեսակի ուսումնասիրության խմբակ, ռայոնին կից 3-ից վոչ պակաս ավիոմոդելի ընկերություն, իսկ գյուղում կոլեկտիվին կից 1-ից վոչ պակաս։

Յուրաքանչյուր պիոներ բաղայում կազմակերպենք «Պաչավիաքիմի պատանի բարեկամներ“-ի բջիջ և ներգրավենք 15-ից վոչ պակաս հասակավորների։

Յուրաքանչյուր պիոների վրա ընկնում ե վիճակախաղի մեկ տոմս տարածելու գործը։

3 հանրապետություններում և շրջաններում կազմակերպենք 6 ռայոնական մոդելի կայան (Բելառուսիայում 4, Աղրբեջանում 1 և Արևմտյան շրջանում 1)։

«Ոսո»-յի շրջանային խորհուրդներին կից կազմակերպենք մանկական սեկցիաներ։

Պիոներների բոլոր ուժերով պարտավորվում ենք «Պիոներ» ինքնաթիռ կառուցելու, վորի համար կազմակերպում ենք միջոցների դանձում։

Յուրաքանչյուր պիոների կազմակերպություն կազմակերպում ե ռազմա-փոստային աղավնապահության 5-ից վոչ պակաս կայաններ։

Յուրաքանչյուր ողակ տարածում ե 5-ից վոչ պակաս հակագազ և ողակի համար ձեռք ե բերում մեկ հակագազ։

Ամեն մի պիոներ ուսումնասիրում ե Մորզեյի այբուբենը, տեղագրություն, և ճանապարհային նշանները։

Ամառային հրապարակների կազմակերպման միջոցով պիոներներին 100%-ով ընդգրկենք ֆիզկուլտուրային պարապմունքներին, մարզանքներ թե տանը և թե կոլեկտիվում։

Ամրացնենք կարմիր բանակի, նավատորմիղի շեֆական կազմակերպությունների կապը։

Յուրաքանչյուր կոլեկտիվ կարմիր բանակի հետ սոցմրցման պայմանագիր ե կապում, յուրաքանչյուր ողակ պարտավորվում։

ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՍՍՀ Գրքի Պալատ
ZUUՈ-Арм.ССР

## ՊԻՈՆԵՐ-ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻՍՏԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Պիոներները և դպրոցականները Խ. Ս. Հ. Մ-ի տարբեր ազգությունների աշխատավորների յերեխաները պայքարում են լենինյան ազգային քաղաքականությունը կիրառելու, արտասահմանյան մանկական կազմակերպությունների հետ կապը ամրացնելու, պրոլետարական համերաշխության ինտերնացիոնալ դաստիարակության համար։ Մեր անելիքն է ամեն կերպ աջակցել պայքարելու կենցաղային հին սովորությունների դեմ, նոր սոցիալիստական կենցաղ կառուցելու համար։ Մենք պետք է ուժանդակենք ազգային կուլտուրայի զարգացմանը, ոգնենք մայրենի լեզվով ընդհանուր կրթության և դաստիարակության համար։ Այս խնդիրները հիմք պետք է ծառայեն ինտերնացիոնալ դաստիարակության համար։ Այս խնդիրների իրագործումը իրենց վրա են վերցնում Բ. Ս. Խ. Հ.-յի, Աղրբեջանի և Արևմտյան շրջանի պատանի լենինցիները։

Յուրաքանչյուր կոլլեկտիվին և դպրոցին կից կազմակերպենք «ՄՈՊՐ-ի պատանի բարեկամների» բջիջներ, ակտիվ մասնակցություն ցույց տանք ՄՈՊՐ-ի աշխատանքներին, ներգրավելով 40 վոչ պակաս հասակավորներ։

Բաժանորդագրություն կազմակերպել արտասահմանյան պիոներական մամուլին։ Յուրաքանչյուր ողակ ստանում է գերմանական պիոներական որգան «Դի-Տրոմժել» լրագրից 1 որինակ։

Պիոներները պարտավորվում են լավացնելու շեֆությունը արտասահմանյան մանկական կազմակերպությունների վրա։ Կանոնավորել ինտերնացիոնալ նամակագրությունը փոխանակելով աշխատանքի փորձը։ Հավաքել ինտերնացիոնալ 5-ական կոպեկները։ Խ. Ս. Հ. Մ-ում գտնվող ոտարյերկրյա բանվորների յերեխաներին ներգրավենք պիոներական կազմակերպությունների շարքերը։ Կազմակերպենք ոտարյերկրյա լեզուները ուսումնասիրող խմբակներ։ Յուրաքանչյուր պիոներ կոլլեկտիվին, կարմիր անկյան կից կազմակերպենք ինտերնացիոնալ անկյուններ, վորոնք կարտացոլեն արտասահմանի պիոներների աշխատանքը և ինտերնացիոնալ դաստիարակության դրությունը մեզ մոտ։

Ամրացնենք տարբեր ազգությունների յեղբայրական միությունը, ուժեղացնելով ազգային կոլլեկտիվների կապը իրար հետ և ԲՍԽՀ, Արևմտյան շրջանի ու Աղրբեջանի միջև։ Ոգնենք հետամնաց ռայոններին պայքարելու արդիլիզմի, անգրագիտության վերացման, աղջիկներին դպրոցների մեջ ընդգրկման, կենցաղի սոցիալիստական վերակառուցման համար։



Զորահավաքի ենք յենթարկում պիոներ կազմակերպությունները պայքարելու մեծապետական շովինիզմի, վորպես գլխավոր վտանգի, անտիսեմիտիզմի, ազգայնականության դեմ, լայն մասսայական աշխատանք ծավալենք և դրանով էլ դիմակազերծ անենք դասակարգային թշնամուն։

## ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՍԻԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մեր խնդիրն է՝ պիոներներից և աշխատավորների յերեխաներից դաստիարակել մարտնչող անաստվածներ։ Կուսակցության ակտիվ ոգնականներ կրոնի դեմ մղած պայքարում։

Յուրաքանչյուր բազայի դպրոցին կից կազմակերպենք անաստվածների բջիջներ։ Ամեն մի պիոներ կոլլեկտիվ պարտավոր է ՄԱՄ-ի շարքերը ներգրավել —39-ից վոչ պակաս հասակավորների։

Ուժեղացնենք հակակրոնական աշխատանք պիոներ կոլլեկտիվում, հակահարված տալով դասակարգային թշնամուն։ ՄԱՄ-ի աշխատանքների մեջ ներգրավենք աշխատավորների յերեխաներին։

Յուրաքանչյուր կոլլեկտիվ տարածում է 50 որինակից վոչ պակաս հակակրոնական գրքեր։ Ողակը բաժանորդագրվում է 1 որինակ «Անաստված»։

Պիոներական ակումբներին, կարմիր անկյուններին, ցեխերին, կոլխոզներին կից կազմակերպենք հակակրոնական անկյուններ։

Յերեքի կոնֆերենցիան գտնում է՝

Սոց. պայմանագիրը ստուգելու համար ստեղծել հաշտարար հանձնաժողով. հետևյալ կազմով՝ «3-ի կոմսոմոլի կոմիտեների ներկայացուցիչները Բ. Խ. Ս. Հ., Ա. Ս. Խ. Հ. կոլխոզցենտրների ներկայացուցիչները, Արևմտյան շրջանի կոլխոզ միության ներկայացուցիչը և Ժող. Տնտ. Խորհ-դի պիոներական «Պրավդա»-յի ներկայացուցիչները

„Պիոներսկայա Պրավդա"-յի ներկայացուցչին հաշտարար հանձնաժողովի ներկայացուցիչ հաստատել։

Սոցմրցման պայմանագրերի լավ կատարման համար անհրաժեշտ գտնել ունենալու — „3"-ի կոմսոմոլի կոմիտեների՝ ԲԼԿՅԵՄ կենտկոմի, Աղր. ԼԿՅԵՄ Կենտ. և արևմտյան շրջանի Համ ԼԿՅՄ շրջկոմի փոխանցիկ դրոշը։

CA 32-1/64

Պայմանագրերի կատարման առաջին ստուգումը կայացնել Արևմտյան շրջանի տերրիտորիայում՝ Սմոլենսկի քաղաքում, իսկ յերկրորդը կայացել Ադրբեջանում՝ Բագվում։

Սոցմրցման պայմանագիրը ստուգելու կոնֆերենցիայի հրավիրումը հանձնարարել հաշտարար հանձնաժողովին։

Պայմանագիրը ստորագրել են՝

| | |
|---|---|
| Արևմտյան շրջան | Դզյակով<br>Անտապենկո<br>Կազլով |
| Ադրբեջանի հանրապ. | Վերեենին<br>Կոնովալով<br>Դժիտվա<br>Ալիյեվա |
| Բ. Ս. Խ. Հ. | Պիլյուգա<br>Գուտին<br>Գալդուկեվիչ |

1931 թ. 22 մայիսի
20 ժամին Մինսկ քաղաքում

ՀՀ Ազգային գրադարան
NL0187393

ՀՍՍՌ-Արմ ՍՍՀ